

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019 թ. սեպտեմբերի 4-ին կայացած թիվ 1 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին ներկա էին 32-ը:

Օրակարգում՝

1. Տեղեկատվություն 2019-2020 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ:
2. Կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների ընթացիկ (տարեկան) հաշվետվության հարցը:
3. Պրոֆեսորի գիտական կոչման շնորհման հարցը:
4. Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը:

ԼՄԵՑԻՆ՝ դեկան Է.Ս. Գևորգյանի հաղորդումը 2019-2020 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ: Նա ներկայացրեց 2019-2020 ուս. տարում կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության նախնական արդյունքները.

Բակալավրիատ՝

Կենսաբանություն մասնագիտություն՝ 58 ուսանող,

Կենսաքիմիա մասնագիտություն՝ 37 ուսանող,

Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա մասնագիտություն՝ 29 ուսանող:

Մագիստրատուրա՝

1. Ընդհանուր և մոլեկուլային գենետիկա՝ 10 ուսանող,
2. Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա՝ 10 ուսանող,
3. Էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում՝ 6 ուսանող,
4. Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն՝ 6 ուսանող,
5. Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա՝ 9 ուսանող,

6. Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա՝ 13 ուսանող,
7. Կենսաֆիզիկա՝ 5 ուսանող,
8. Կիրառական մանրէաբանություն՝ 7 ուսանող:

ԼՍԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների ընթացիկ (տարեկան) հաշվետվության հարցը:

1. Թեմա՝ «Հայաստանի պահպանվող տարածքներում կենսաբազմա-զանության մոնիթորինգային ծրագրերի իրականացման համար կենսացուցիչների որոշում»:
Ղեկավար՝ Սիրանուշ Գերասիմի Նանագյուլյան:
2. Թեմա՝ «Օրգանական թափոններից դեպի կենսաջրածին. Թափոնների նախամշակումը և մանրէներում H₂-ի արտադրության խթանման գործընթացների կարգավորումը»:
Ղեկավար՝ Արմեն Համբարձումի Թոշունյան:
3. Թեմա՝ «Արքեաների կենսաբազմազանությունը և էկոլոգիական գործառույթը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրներում»:
Ղեկավար՝ Հովիկ Հարությունի Փանոսյան:
4. Թեմա՝ «CRISPR-Cas9 գենոմի խմբագրման տեխնոլոգիայի մշակումը հակաքաղցկեղային դեղամիջոցների նկատմամբ քաղցկեղային բջիջների զգայնության բարձրացման նպատակով»:
Ղեկավար՝ Գալինա Գեորգիի Հովհաննիսյան:
5. Թեմա՝ «Արարատյան դաշտում ստորերկրյա ջրերի որակի և հողերի աղակալման վրա դրանց ազդեցության գնահատումը ոռոգման ջրերի որակի ցուցանիշի (IWQI) և երկրավիճակագրական մեթոդների կիրառմամբ»:
Ղեկավար՝ Կարեն Արամայիսի Ղազարյան:
6. Թեմա՝ «Գենասենսորի ազդանշանի փոփոխության վրա լիզանդի ազդեցության ուսումնասիրությունը»:
Ղեկավար՝ Պողոս Հովհաննեսի Վարդևանյան:

7. Թեմա՝ «Հակաուռուցքային դեղամիջոցների արդյունավետության բարձրացման քրոմատին-կախյալ ուղու առանցքային ֆերմենտների ակտիվության կարգավորումը»:

Ղեկավար՝ Իրինա Գեղամի Արծրունի:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թոչունյանը, կենսաաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Մ. Հարությունյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., դոցենտ Մ.Ս. Առաքելյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ., դոցենտ Ն.Ա. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ թեմաների հետագա ֆինանսավորումը:

ԼՍԵՑԻՆ՝ կենդանաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ. Մարինե Սեմյոնի Առաքելյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II 5Բ կետը՝ երաշխավորել Մարինե Սեմյոնի Առաքելյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:


ԼՄԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվան անվանական կրթաթոշակներիի շնորհման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝

Նորայր Միսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մխիթարի Խալաթյանին, իսկ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Տաթևիկ Արսենի Ստեփանյանին:

Գիտական խորհրդի նախագահ,

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է. Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար,

դոցենտ



Ի.Վ. Շահազիզյան